

## ՈՐՈՇ ՅՈՒՐՕՐԻՆԱԿ ԿԱՂԱՊԱՐ-ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐՈՒՄ\*

ՀՏԴ 82.0:09

DOI: 10.52063/25792652-2022.2.13-156

### ՕՎՍԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական  
մանկավարժական համալսարանի հայցորդ,  
Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական աշխատող,  
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[ovsannakhachatryan77@gmail.com](mailto:ovsannakhachatryan77@gmail.com)

Սույն հոդվածի նպատակն է վեր հանել ձեռագրի հիշատակարանի կարևոր առանձնահատկություններից մեկը՝ կաղապարային բնույթը:

Հոդվածի խնդիրն է ցույց տալ կաղապարային հիշատակարանների նշանակությունը ձեռագրագիտության մեջ:

Աշխատանքը շարադրված է պատմահամեմատական և համադրական մեթոդների կիրառմամբ:

Կատարված հետազոտության արդյունքը ցույց է տալիս, որ հայերեն ձեռագրերի հիշատակարանները մեծ մասամբ գրված են հիշատակարանային կաղապարներով, նույնիսկ կան ամբողջական հիշատակարանի նմուշ-օրինակներ: Ձեռագրի հիշատակարանի տիպիկ նմուշ-օրինակ կա ՄՄ (Մ. Մաշտոցի անվ. Մատենադարանի) Հ<sup>մ</sup> 2335 ձեռագրում (Երուսաղեմ, 1476 թ.), իսկ ՄՄ 3461 ձեռագրում (Թոխաթ, 1662 թ.) կան հուշադրյուրի, գավաթի վրա գրելու արձանագրություն-հիշատակարանների օրինակներ: ՄՄ Հ<sup>մ</sup> 3633, 5664, 6059, 8454, 8578 ձեռագրերի՝ նույն կաղապարով գրված հիշատակարանների տեղեկությունները համադրելով՝ պարզեցինք ձեռագրերի «ազգակցական» կապերը, ՄՄ Հ<sup>մ</sup> 8578 ձեռագրի գրչության վայրը՝ Մոկս գավառ, ինչպես նաև Սարգիս գրիչի ով լինելը՝ Սարգիս Հիզանցի (եղել է Խիզան կամ Հիզան գավառի անվանի ծաղկող Սարտիրոս Խիզանցու եղբայրը):

Այսինքն՝ միևնույն կաղապար-օրինակի հիման վրա գրված հիշատակարանների հավաքման, դասդասման արդյունքում հնարավոր կլինի պարզել ոչ միայն ձեռագրի ստեղծման հանգամանքների հետ կապված զանազան տեղեկություններ, այլև լուծել ձեռագրագիտական տարաբնույթ հարցեր:

Հիմնաբառեր՝ հիշատակարան, ժանր, կաղապար, գրիչ, ձեռագիր, աղբյուրի վրա գրելու հիշատակարան, գավաթի վրա գրելու հիշատակարան, Սարգիս Հիզանցի:

### ՆԱԽԱԲԱՆ

Հայերեն ձեռագրի առաջացմանը զուգընթաց երևան է եկել հայ միջնադարյան գրականության կարևոր ժանրերից մեկը՝ ձեռագրի հիշատակարանը (Բախչինյան), որի ժանրային կարևոր առանձնահատկություններից կարելի է համարել կաղապարային բնույթը:

\* Հոդվածը ներկայացվել է 31.05.2022թ., գրախոսվել՝ 23.06.2022թ., տպագրության ընդունվել՝ 10.07.2022թ.:

Հայերեն ձեռագրի հիշատակարանները մեծ մասամբ գրված են ընդունված հիշատակարանային կաղապար-արտահայտությունների, բառակապակցությունների, նույնիսկ նախադասությունների գործածմամբ: Բոլոնիայի համալսարանի պրոֆ. Շիրիկյանը առանձնացրել է հայերեն ձեռագրերի հիշատակարաններում եղած զանազան կաղապարային արտահայտություններ ու բառակապակցություններ՝ «ձեռս փտի ի հող դառայ, գիրս մնայ յիշատակող», «յերեսս անկեալ աղաչեմ», «ի ինդոյ պատուական սարկաւագի», «ի յարդար վաստակոց իւրոց», «ի ստոյգ և ընտիր և լավ օրինակէ», «շնորհիւ Տեառն սկսայ եւ ողորմութեամբ ավարտեցի» և այլն (Sirinian 76-85): Հայերեն ձեռագրերի հիշատակարանային կաղապարներին անդրադարձել է նաև բելգիացի հետազոտող Էմմանուել Կան Էլվերդինգեն (Van Elverdinghe 1-7), իսկ Խ. Հարությունյանը այդ կաղապարները դասակարգել է չորս պայմանական խմբի մեջ՝ «ա. կառուցվածքային բնույթի համընդհանուր կաղապարներ, բ. գրչօջախների կնիքը կրող կաղապարներ, գ. հեղինակային կաղապարներ, դ. թափառող կաղապարներ» (Հարությունյան 198-217):

Հիշատակարանային կաղապարներին զուգահեռ՝ գոյություն ունեն կաղապար-հիշատակարաններ, որոնք ամբողջական հիշատակարանի նմուշ-օրինակներ են:

### Կաղապարային հիշատակարանները ձեռագրերում

Հիշատակարանային կաղապարներից պետք է տարբերել կաղապար-հիշատակարանները, որոնք ոչ թե բառակապակցություններ կամ նախադասություններ են, այլ ամբողջական հիշատակարանի նմուշ-օրինակներ: Կաղապար-հիշատակարանի տիպիկ օրինակ կա 1476 թ.-ին Երուսաղեմում գրված ՄՄ Հ<sup>մ</sup> 2335 ձեռագրում (Մաթևոսյան ԺԸ.; Հարությունյան 201-202), որտեղ տեղանունների, անձնանունների և այլ հատկանունների փոխարեն գրված են՝ «այս անուն», «այս չափ», «որչափ որ կամիս՝ ասայ», «այս առաջնորդի» պայմանական արտահայտությունները, որպեսզի հետագայում հիշատակարանի օրինակից օգտվողը լրացներ համապատասխան անունները.

«[Փ]առք եզակի տերութեանն եւ եռահիւսակ դաւանութեան... Արդ, յանգ ելեալ աւարտեցաւ հոգիաբուխ մատեանս, որ կոչի Մանրուսումն, ի շրջագայութեան Հայոց տումարի (այս չափ), ի գաւառս (այս անուն), ի հայրապետութեան տեառն (այս անուն), ի յերկնահանգէտ եւ ի գերահռչակ, եւ ի հրեշտակաճեմ, եւ յաստուածաբնակ վանքս, որ կոչի (այս անուն), որ նման է վերինն Երուսաղէմ, ընդ հովանեաւ [այս անուն], ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս (այս անուն), որ է վարուքն մաքուր, բնութեամբ հեզ, լեզուան քաղցր, սրտիւն առատ, իմաստուն՝ որպէս Աբրահամ (որչափ որ կամիս, ասա), առ ոտս (այս առաջնորդի), ձեռամբ յոգնամեղ եւ անարիեստ գրչի [այս անուն]...» (ՄՄ ձեռ. 2335, 181բ):

Վերոգրյալ կաղապարի բառացի կիրառումը դեռևս չենք գտել որևէ ձեռագրի հիշատակարանում, սակայն սա ոչ թե փաստում է դրա չգործածվելը, այլ վեր է հանում այն բնավորությունը, որ ունեցել են միջնադարյան գիչները. ունենալով որոշակի ստեղծագործական ազատություն՝ նմուշը նույնությամբ չեն արտագրել, այլ կատարել են հավելումներ, կրճատումներ՝ իրենց ոճին և ունակություններին համապատասխան: Այնուամենայնիվ, ՄՄ հ<sup>մ</sup> 2335 ձեռագրում եղած հիշատակարանի նմուշի առկայությունը արդեն պարզ է դարձնում, որ եղել են նման կաղապար-օրինակներ, որոնցից օգտվել են գրիչները՝ թեկուզև որոշակի փոփոխություններ կատարելով: Եվ եթե մենք միևնույն կաղապարով գրված հիշատակարանները հավաքենք մի տեղում և համադրենք ունեցած տվյալները, ապա հնարավորություն կունենանք գտնել ձեռագրերի գրչության հանգամանքների հետ կապված զանազան տեղեկություններ, ձեռագրագիտական կարևոր հարցերի պատասխաններ: Օրինակ՝ վերջերս ձեռագրերի նկարագրության աշխատանքի ընթացքում ՄՄ Հ<sup>մ</sup> 8578 ձեռագրում գտանք մի հիշատակարան, որն ունի չափածո ծավալուն (141 տող) և ոչ

ծավալուն արձակ հատվածներ: Հիշատակարանում գրված է ձեռագրի գրչության թվականը՝ 1599 թ., գրչի անունը՝ Սարգիս, իսկ գրչության վայրը բացակայում է.

Փառք եռակի աստուծութեանն  
 Եւ միակի ան[ճառ] բնութեանն],  
 Երրորդութեանն անքըննական  
 Եւ միութեանն անզըննական...  
 Յիշման առնէք ըզմեզ արժան:  
 ԸզՍարգիս հողս եւ անպիտան:  
 Եւ դուք յիշիք առ Տէրըն Բան,  
 Յարժամ գայցե ի դատաստան,  
 Լըսէք ըզձայնն երանական  
 Չեկայք արհնեայք Հաւրն իմ արժան:  
 Եւ մա տացուք փառս անխափան,  
 Երրորդութեանըն միական  
 Աղաչեսցուք գՂայրն գըթական,

Որ է արհնեայ միշտ յաւիտեան (ՄՄ ձեռ. 8578, 404ա-7ա):

Եւ արդ, գրեցաւ եւ ծաղկեցաւ եղանակաւոր տառս եւ աստուածաբան կտակս եւ խընկալի տուփս եւ զանազան ծաղկաւետ բուրաստանս եւ անուշահամ կերակուրս, որ կոչի Շարակնոց՝ ի խիկ յարհնակէ, ձեռամբ սուտ եւ խաբբեայ [407բ] անարհեստ գրչի՝ Սարգիս, եւ ծնաւոյաց իմոց՝ տէր Սարգիս վարպետին եւ Խանումին՝ փոխեցելոցն առ Բրիստոս, եւ իմ պատուական եղբարն՝ տէր Մարտիրոս վարպետին... եւ իմ որդոցն՝ Յ[ո]վանես սարկաւագին եւ Կարապետին... Գրեցաւ Շարակնոցս ի թվական[ի] ՌԽԸ. (1599), եւ Բրիստոսի փառք յաւիտեանս. [ամ]է[ն]» (ՄՄ ձեռ. 8578, 407աբ):

Նկատեցինք, որ այս ծավալուն հիշատակարանը կա նաև ՄՄ Հ<sup>մ</sup> 5664, 6059, 8454, 3633 ձեռագրերում, ուստի հիշատակարանային տվյալները համադրելով՝ փորձեցինք կատարել ձեռագրագիտական փոքրիկ հետազոտություն:

Այսպես՝ ՄՄ Հ<sup>մ</sup> 5664 ձեռագրի հիշատակարանում գրիչ Կիրակոս Ավընդանցին նշում է, որ իր ուսուցիչը Սարգիս Հիզանցին է. «Վասն որոյ աղաչեմ զձեզ լալով եւ պաղատանօք, զմանկունսրդ սուրբ եկեղեցւոյ, զի լի եւ առատ սրտիւ ողորմի ասացէք ստացող սորա զշնորհալի եւ զշնորհագարդ, զաստուածահաճոյ եւ սրբասէր, զառաքինի եւ զհոգեսէր, զբազմաշնորհն եւ զբարեբախտ, զաստուածագարդ շնորհօք լցեալն Սիմէոն վարդապետին, եւ իւր ծնօղացն, եւ ինձ՝ մեղապարտ Կիրակոսիս, եւ իմ ծնօղացն, եւս առաւել վարդապետին իմոյ՝ տէր Սարգիս Հիզանցոյն, միթէ լսել տայ ձեզ Բրիստոս Աստուած մեր զէ (շարունակած)» (ՄՄ ձեռ. 5664, 441բ), ինչը հաստատվում է հենց Սարգիս գրչի ՄՄ Հ<sup>մ</sup> 6420 Ավետարանի ծաղկելու առիթով գրված հիշատակարանում՝ «եւ զանդրանիկ որդին իմ՝ զՅովանես սարկաւագն, եւ զաշակերտն մեր՝ զտէր Կիրակոսն եւ զԴիլաքն, որ աւզնական եղեն ի ծաղկել սուրբ Աւետարանիս...» (ՄՄ ձեռ. 6420, 341ա): Գրականության մեջ կա այն տեղեկությունը, որ Սարգիս Հիզանցին եղել է Հիզանի հայտնի ծաղկող Մարտիրոսի եղբայրը<sup>1</sup>, ինչը Սարգիս գրիչը հաստատում է ՄՄ Հ<sup>մ</sup> 8578 ձեռագրի հիշատակարանում. «եւ իմ պատուական եղբարն՝ տէր Մարտիրոս վարպետին... եւ իմ որդոցն՝ Յ[ո]վանես սարկաւագին եւ Կարապետին...» (ՄՄ ձեռ. 8578, 407ա):

Վերոնշյալ փաստերի համադրությամբ պարզ է դառնում, որ ՄՄ Հ<sup>մ</sup> 8578 ձեռագրի Սարգիս գրիչը Սարգիս Հիզանցին է:

<sup>1</sup> Սարգիս Խիզանցին (Ժ2-ԺԷ. դդ.) ձեռագրեր է նկարագրելու խլաթում, Ավընդանց գյուղում, եղել է Խիզանի անուանի ծաղկող Մարտիրոս Խիզանցու եղբայրը, որից էլ սովորել է ծաղկելու արվեստը: Սարգիս Խիզանցու աշակերտներն են եղել Կիրակոսը, Չաքարիան, Դիլաքը, որոնք օգնել են իրենց ուսուցչին ձեռագրեր ծաղկելու գործում (Գեորգեան 667):

Այսպիսով՝ եթե կաղապարային հիշատակարանների տվյալների համադրությամբ հնարավոր եղավ պարզել Սարգիս Գրչի ով լինելը, ապա հնարավոր կլինի պարզել նաև այդ ձեռագրերի «ազգակցական» կապերը, որոնցով և՛ ՄՄ Հ<sup>մ</sup> 8578 ձեռագրի գրչության վայրը:

ՄՄ Հ<sup>մ</sup> 5664 ձեռագիրը գրված է 1615, 1627 թվականներին՝ Կիրակոս Ավրնդանցի գրչի ձեռքով (ինչպես վերը նշեցինք, նա եղել է Սարգիս Հիզանցու աշակերտը), Ավրնդանց գյուղում: ՄՄ Հ<sup>մ</sup> 6059 ձեռագրի (1631 թ.) Ավետիս Գրչի հիշատակարանից պարզվում է, որ ինքը եղել է Կիրակոսի աշակերտը. «Արդ, որք հանդիպիք սմա՝ կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զանարժան զծողս եւ զծնօղքն իմ՝ Վարդան քահանայն եւ զՄահմուր, եւ զմեծ պապն իմ յ383ալ զԹումայ քահանայն, եւ զվարպետն իմ՝ զտեր Կիրակոս Աւրնդանցին, որ բազում աշխատությամբ ուսոյց զիս...» (ՄՄ ձեռ. 6059, 382բ): Իսկ ՄՄ 3633 ձեռագրի (1655 թ.) Թումա գրիչը գրում է, որ իր հայրը տեր Ավետիսն է. «Արդ, որք հանդիպիք սմա՝ կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղթութս ձեր զանարժան զծողս՝ զԹումայ, եւ զծնօղքն իմ՝ տեր Աւետիս, եւ զմայրն իմ՝ զԱռիստ, զեղբայրն իմ՝ Վարդան, եւ տղայն իմ՝ Խաչիկ...» (ՄՄ ձեռ. 3633, 370բ): Ավետիս գրիչը ՄՄ Հ<sup>մ</sup> 8454 ձեռագրի հիշատակարանում հաստատում է, որ Թուման ոչ միայն իր պապի անունն է, այլ նաև որդու. «Արդ, որք հանդիպիք սմա, կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զանարժան յ408բլ զըծողս՝ զԱւետիս, եւ զծննօղքն իմ՝ զՎարդան քահանայն, եւ զմայրն իմ՝ զՄահմուրն, եւ զպապն իմ՝ զԹումա քահանայն, եւ զտղայքն իմ՝ զԹումէն եւ զՎարդօ, եւ Նոցա մայրն՝ զԱռիստ, եւ զվարպետն իմ՝ զտեր Կիրակոս...» (ՄՄ ձեռ. 8454, 408աբ):

Այսպիսով՝ պարզվում է՝ ՄՄ Հ<sup>մ</sup> 3633 ձեռագիրը ընդօրինակված է 1655 թվականին, Ավրնդանց գյուղում, Թումա Գրչի ձեռքով, որը Ավետիս Գրչի որդին է: ՄՄ Հ<sup>մ</sup> 6059 ձեռագիրը ընդօրինակված է 1631 թվականին, կրկին Ավրնդանց գյուղում Ավետիս Գրչի ձեռքով, որը Կիրակոս Գրչի աշակերտն է: ՄՄ Հ<sup>մ</sup> 5664 ձեռագիրը ընդօրինակված և նկարագրված է 1615, 1627 թվականներին, Ավրնդանց գյուղում Կիրակոս Ավրնդեցու ձեռքով, որը Սարգիս Հիզանցու աշակերտն է: Այսինքն՝ այս ձեռագրերը մի դպրոցի ծնունդ են: Ըստ այդմ, թվում է՝ կարելի էր ենթադրել, թե ՄՄ Հ<sup>մ</sup> 8578 ձեռագիրը, որը գրվել է Սարգիս Հիզանցու ձեռքով և, ըստ ետևյալի, վերոհիշյալ դպրոցի արդյունքն է, նույնպես ընդօրինակվել է Ավրնդանց գյուղում: Պարզելով, սակայն, որ այդ կաղապարային հիշատակարանը գոյություն ունի Մոկս գավառի այլ գյուղերում ընդօրինակված ձեռագրերում ևս<sup>1</sup>, պարզ է դառնում, որ վերոհիշյալ գրչության դպրոցի ներկայացուցիչները ձեռագրեր ընդօրինակել են ոչ միայն Ավրնդանց գյուղում, հետևաբար չենք կարող վստահ լինել, որ ՄՄ Հ<sup>մ</sup> 8578 ձեռագիրը ընդօրինակվել է հենց այս գյուղում, սակայն կարող ենք նշել, որ այն ընդօրինակվել է Վանի նահանգի Մոկս գավառում:

Ձեռագրերում կան ոչ միայն հիշատակարանի, այլև արձանագրություն-հիշատակարանի նմուշ-օրինակներ: Օրինակ՝ ՄՄ Հ<sup>մ</sup> 3461 ձեռագրում կան աղբյուրի, գավաթի վրա գրելու արձանագրությունների օրինակներ՝ գրված ձեռագրի գրիչ Հովհաննես Բաբերդցու ձեռքով: Առաջինը վերնագրված է «Աղբրի վրայ գրելու յիշատակարան» (այստեղ նշված է ձեռագրի գրչության թվականը 1662 թ.<sup>2</sup>) և

<sup>1</sup> Օր.՝ ՄՄ հ<sup>մ</sup> 4620 ձեռագիրը Շարակնոց է՝ ընդօրինակված 1658 թվականին Վարդան Գրչի ձեռքով, Սուրս գիւղում (գուր Մեծ Հայքի Մոկս աշխարհում, Մոկս Առանձնակ գավառում, հետագայում Սորս՝ Վանի նահանգի Վանի գավառում, Մոկսի գավառակում. Հակոբյան և ուրիշներ 727), կամ էլ օրինակ ՄՄ հ<sup>մ</sup> 6053 ձեռագիրը կրկին Շարակնոց է՝ ընդօրինակված 1660 թվականին, Հովանես Գրչի ձեռքով, Ապարանաց Ուխտում:

<sup>2</sup> «Արդ, գրեցաւ սուրբ գիրքս թփին ՌՃԺԱ. (1662) ամին, ի քաղաքն Թուխաթ, ի թաղն Պազարճուխ, ի դուռն սուրբ Սարգըսու, ձեռամբ անիմաստ եւ յոյժ մեղապարտ Բաբերդացի

Նախատեսված է հուշաղբյուրի<sup>1</sup> հիշատակի քարի վրա փորագրելու համար: Արձանագրություն-հիշատակարանի այս նմուշում, ինչպես նկատում ենք, կա «Ֆլան» պայմանական արտահայտությունը, որի փոխարեն օրինակից օգտվողը պետք է լրացներ այն մարդու անունը, ում ծնողների հիշատակին և տոհմին նվիրված էր հուշաղբյուրը: Վերջինս համեմատված է Հորդանան գետի և դրախտից դուրս եկող չորս գետերի հետ:

### Աղբյուրի վրայ գրելու յիշատակարան

Աղբյուր, որ է ջրոց բըխման,  
Յորդանանու է սայ Նըման  
Կամ Դ. գետոցն յաղենական  
Արբուցանող գամենեսեան:  
Կանգնեալ ըզսայ հոգոյ հնձան,  
Պարոն ֆլան ծընօղացն յիշման,  
Նայ եւ սեռից զարմից լըման  
Թվին հայոց ՌՃ. եւ մետասան (1662) (ՄՄ ձեռ. 3461, 43ա,  
Հարությունյան, 330):

Այս հիշատակարանին հաջորդում են գավաթի վրա գրելու նմանատիպ հիշատակարանների օրինակներ.

### Գաւաթի

Գաւաթս անապակ գինով ի լի,  
Անուշ լինի զսայ խմօղի,  
Ի վայելումն այս ֆլանի,  
Թվին Ռ. եւ Կ. (1611):

Այս անուն մարդըս Թոխաթցի,  
Ըզսայս գաւաթըս կազմել տվի,  
Դուստր եւ որդոցս ամենայնի,  
Թվին Ռ. եւ Ճ.ի (1651):

### Գաւաթի

Բաժակս գինով ուրախարար,  
Քիչ խըմօղին է սայ հալալ,  
Ալէքսանոսն ըզսայ արար

Դուստր եւ որդոց զարմից համար (ՄՄ ձեռ. 3461, 43ա):

Այս վերջին օրինակում նկատում ենք կենսասիրություն. հեղինակը խրախուսում է չափավոր խմելը և մերժում հարբեցողությունը, ինչպես միջնադարյան տաղերգուները, օր. Հովհաննես Թլկուրանցին իր տաղում.

Գինին մարդոյ ամօթ բերէ  
Եւ ի լեզու չար արկանէ.

Քան զգինին յետեւ հացին

Երկու Լ՝ իրեքն՝ այլ շահ չէ (Դուրսանյան 112; Թլկուրանցի 186):

ՄՄ Հ<sup>41</sup> 3461 ձեռագրի նույն երեսի արտաքին լուսանցում նկատում ենք ևս մեկ օրինակ.

Այս գաւաթս է գեղեցիկ,  
Մեջն է [լ]ցած անուշ գինիկ,  
Առ դու ի քո[ւմ] ///ինդ

Յովհաննես իրիցու: Ամեղադիր լերո՛ւք գրիս սղալանաց եւ անարիեստութեանն, զի կար մեր այս եր, իմ սիրելի՛ հայրք եւ եղբայրք» (ՄՄ ձեռ. 3461, 358բ):

<sup>1</sup> Հուշաղբյուրի կառուցման մշակույթը եղել է հայկական միջավայրում և շարունակվում է մինչ օրս. այն կառուցում են՝ ի հիշատակ մերձավոր հարազատների:

### Չինքն խըմե խիստ անուշիկ:

Վերոգրյալները անձանագրություն-հիշատակարանների կաղապարներ են, և չի բացառվում նմանատիպ այլ օրինակների հնարավոր առկայությունը հայերեն ձեռագրերում:

### Եզրակացություն

Հայերեն ձեռագրերի հիշատակարանները աչքի են ընկնում հիշատակարանային կաղապարների լայն գործածմամբ, նույնիսկ գոյություն ունեն ամբողջական հիշատակարանի նմուշ-օրինակներ (ինչպես ՄՄ Հ<sup>տ</sup> 2335 ձեռագրում եղած օրինակը), որոնցից օգտվել են միջնադարյան գրիչները: Ձեռագրերում կան ոչ միայն ձեռագրական հիշատակարանների, այլև արձանագրություն-հիշատակարանների օրինակներ՝ հուշադրյուրի, գավաթի վրա գրելու համար նախատեսված:

Միևնույն կաղապար-օրինակով գրված հիշատակարանների միջոցով հնարավոր է պարզել ինչպես մասնավոր, այնպես էլ ընդհանուր ձեռագրագիտական հարցեր, ստանալ ձեռագրերի ստեղծման հանգամանքների հետ կապված գնահատական տեղեկություններ: Ինչպես վերը նկատում ենք, հիշատակարանների տվյալները համադրելով հնարավոր եղավ պարզել ՄՄ Հ<sup>տ</sup> 3633, 5664, 6059, 8454, 8578 ձեռագրերի «ազգակցական» կապերը, ՄՄ Հ<sup>տ</sup> 8578 ձեռագրի գրչության վայրը՝ Մոկս գավառ, ինչպես նաև Սարգիս գրչի ով լինելը՝ Սարգիս Հիզակնի:

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բախչիյան, Յերիկ. *Հայկական ձեռագրերի հիշատակարանները*. Երևան, 1980:
2. Գեորգեան, Աստղիկ. *Հայ մանրանկարիչներ (IX-XIX դդ.)*. Գահիրե, 1998:
3. Դյուրխանյան, Աելիտա. *Հայ գրականության պատմություն*. Երևան, 2006:
4. Հակոբյան, Թադևոս և ուրիշներ. *Հայաստանի և հարակից շրջանների տեղանուններ բառարան*. հտ. 4, ցուցակ 1, Երևան, 1998:
5. Հարությունյան, Խաչիկ. *Հայերեն ձեռագրերի հիշատակարանները*. Երևան, 2019:
6. Հովհաննես, Թլկուրանցի. Տաղեր. Երևան, 1960:
7. Մաթևոսյան, Արտաշես. *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ. ղարեր*. Երևան, 1988:
8. Sirinian, Anna. *On the Historical and Literary Value of the Colophons in Armenian Manuscripts, "Armenian Philology in the Modern Era, from Manuscripts to Digital Text"*. ed. by V. Calzolari with the collaboration of M. E. Stone, Brill, Leiden-Boston, 2014.
9. Van Elverdinghe, Emmanuel. "Recurrent Pattern Modelling in a Corpus of Armenian Manuscript Colophons". *Journal of Data Mining and Digital Humanities*, Special Issue, 2017, pp. 1-7.
10. ՄՄ ձեռ. 2335, 3461, 3633, 5664, 6059, 6420, 8454, 8578:

### WORKS CITED

1. Bakhch'inyan, Henrik. *Haykakan dzeragreri hishatakarannerē*. Erevan. [*Colophons of Armenian Manuscripts*. Yerevan] 1980. (In Armenian)
2. Dolukhanyan, Aelita. *Hay grakanut'yan patmut'yun*. Erevan. [*History of Armenian literature*. Yerevan] 2006. (In Armenian)
3. Gēorgean, Astghik. *Hay manrankarich'ner (IX-XIX dd.)*. Gahirē. [*Armenian Miniaturists (IX-XIX centuries)*. Cairo] 1998. (In Armenian)
4. Hakobyan, T'adevos ev urishner. *Hayastani ev harakits' shrjanneri teghanunneri bararan*. ht. 4, tsutsak 1, Erevan. [*Dictionary of Toponyms of Armenia and of Adjacent Regions*. Vol. 4, list 1, Yerevan] 1988. (In Armenian)

5. Harut'yunyan, Khach'ik. *Hayeren dzeragreri hishatakarannerë*. Erevan. [Colophons of Armenian Manuscripts. Yerevan] 2019. (In Armenian)
6. Hovhannes, T'lkurats'i. Tagher. Erevan. [Poems. Yerevan] 1960. (In Armenian)
7. Mat'evosyan, Artashes. *Hayeren dzeragreri hishatakaranner, V-XII dd.* Erevan. [Colophons of the Armenian Manuscripts, V-XII Century. Yerevan] 1988. (In Armenian)
8. Sirinian, Anna. *On the Historical and Literary Value of the Colophons in Armenian Manuscripts, "Armenian Philology in the Modern Era, from Manuscripts to Digital Text"*. ed. by V. Calzolari with the collaboration of M. E. Stone, Brill, Leiden-Boston, 2014.
9. Van Elverdinghe, Emmanuel. "Recurrent Pattern Modelling in a Corpus of Armenian Manuscript Colophons". *Journal of Data Mining and Digital Humanities*, Special Issue, 2017, pp. 1-7.
10. MM dzer. 2335, 3461, 3633, 5664, 6059, 6420, 8454, 8578. [Yerevan, Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts (Matenadaran) MSS no. 2335, 3461, 3633, 5664, 6059, 6420, 8454, 8578].

## SOME UNIQUE COLOPHON-EXEMPLARES IN ARMENIAN MANUSCRIPTS

**OVSANNA KHACHATRYAN**

*Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan, Ph.D. Student;  
Matenadaran after Mesrop Mashtots, Researcher,  
Yerevan, the Republic of Armenia*

The purpose of this article is to specify a very important feature of the colophons in the Armenian manuscripts - their exemplary character.

The objective of the work is to present the importance of colophon-exemplares in codicology.

The work is written applying the historical-comparative and comparative methods.

The results of the research show that though colophons are mostly written in colophon-patterns, there are colophon-exemplares of a complete colophon too. There is a typical colophon-exemplar in the Ms. 2335 of Matenadaran (M, Jerusalem, 1476), and there are examples of inscriptions-colophons: a colophon for writing on a fountain and on a cup in the Ms. M 3461 (T'okhat', 1662). Comparing the information of the colophons written in the same colophon-exemplar of the manuscripts M 3633, 5664, 6059, 8454, 8578, we clarified the "kinship" connections of those manuscripts. We also found out the place of writing of the Ms. M 8578 (Moks province), as well as who the scribe Sargis was. He is Sargis Hizants'i, the brother of the famous miniature painter Martiros Hizants'i from Hizan province.

In other words, due to collecting and classifying colophons written on the basis of the same colophon-exemplar, it is possible to find out not only various data concerning the circumstances of the origin of those manuscripts, but also to solve various codicological issues.

**Keywords:** *colophons, genre, exemplar, scribe, manuscript, a colophon for writing on a fountain, a colophon for writing on a cup, Sargis Hizants'i.*

**НЕКОТОРЫЕ УНИКАЛЬНЫЕ КОЛОФОНЫ В АРМЯНСКИХ РУКОПИСЯХ****ОВСАННА ХАЧАТРЯН**

*аспирант Армянского государственного педагогического  
университета им. Хачатура Абовяна, научный сотрудник  
Матенадарана им. Месропа Маштоца,  
г. Ереван, Республика Армения*

Цель данной статьи – указать на очень важную особенность колофонов армянских рукописей, их экземплярный характер и попытаться показать значение колофонов в кодикологии.

Работа написана с применением сравнительно-исторических и сопоставительных методов.

Результаты исследования показывают, что, хотя в армянских рукописях колофоны в большинстве своем написаны в соответствии с шаблонами для коротких форм колофонов, также существуют и объемные колофоны. В рукописи № 2335 Матенадарана (М, (Иерусалим, 1476 г.) есть типичный экземплярный колофон, а в рукописи М № 3461 (Тохат, 1662 г.) — примеры надписей-колофонов: колофон для написания на роднике-памятнике, на чаше. Сопоставив сведения на колофонах, написанных по одному и тому же колофону-экземпляру рукописей М № 3633, 5664, 6059, 8454, 8578, мы выяснили «родственные» связи этих рукописей. Мы также выяснили место написания рукописи М № 8578 (провинция Мокс) и кто такой писец Саргис. Это Саргис Хизанци – брат Мартироса Хизанци, знаменитого миниатюриста из провинции Хизан.

Иными словами, в результате классификации колофонов, написанных на основе одного и того же колофона-экземпляра (шаблона), можно выяснить не только разые сведения, связанные с обстоятельствами происхождения рукописи, но и решить различные кодикологические вопросы.

**Ключевые слова:** *колофоны, жанр, экземпляр, писец, рукопись, колофон для написания на роднике-памятнике, колофон для написания на чаше, Саргис Хизанци.*